Հոգին այն աշխարհից հովանավորում է հարազատներին, բայց և հալածում է իրեն և իրայիններին վատություն անողներին և վնաս պատճառողներին։ Ննջեցյալի նկատմամբ զանգեզուրցին զգում էր պատկառանք, նրան մեծարում և նրա օգնությունն էր հայցում, մյուս կողմից՝ երկյուղ էր կրում նրանից և նրա մեռած մարմնից և ամեն միջոց ձեռք էր առնում, որ թաղված տեղին անշարժ գամված մնա։

Այս զգացմունքի մեջ կար երկուություն։ Այդ երկուությունը առանձնապես երևան էր գալիս զանգեզուրցու դեպի սրբերն ունեցած վերաբերմունքի մեջ։ Զանգեզուրումն էլ թեև ոչ այնպես հաճախ, ինչպես Լեռնային Ղարաբաղում, պակաս չեն նըհատակնէrի գերեզմաններ։ Այսպես, Հին Գորիսի մոտ, գրեթե, իրար դիմաց, գյուղը պարփակող ձորահովտի լանջերին երկու քարայրեր ամփոփում են նահատակներին։ Մեկը կոչվում է պարզորեն Նըհատակ, մյուսը՝ Մաrդärս՝ սըփ Մըrտöirխ։ Այստեղ պատերին կախված կտեսնեք թելով կապված քարեր, որոնց հիվանդները հանձնել են իրենց տկարությունը։ Սըփ Մըrտöirխի մոտ տնկված ծառը մնում էր անձեռնմխելի։ Նրա ճյուղի վրայից կախված պարաններով Բարեկենդանին կամ Վարդավառի տոնին աղջիկները ճիճճ էին անում՝ ճոճվում էին, նրա աղբյուրից խմում էին նորածին երեխա ունեցողները, որ ավելի շատ կաթ ունենան կանայք։ Գորիսի և Վերիշենի ճանապարհին Ղուրուչա կոչվող տեղում թաղված է մի ինչ-որ սուրբ մարդ, որի գերեզմանին ուխտ էին գալիս անխոս, մոմ վառում, քարերը համբուրում և նույնպես անխոս վերադառնում՝ երեսը նրան միշտ դարձրած, քայլելով ետ-ետ։ Արծվանիկի մոտ, Կաrմիr վաճfի տակ մի քարանձավում ապրել է մի ինչ-որ եգճավor և այդտեղ թաղվել։ Նրա գերեզմանը ուխտատեղի էր։ Սուրբ լեռների գագաթներին ցույց են տալիս սուրբ գերեզմաններ։ Նույնպիսի մի սուրբի գերեզման կա Ջorէfդոճի եկեղեցում, որտեղ մոմ էին վառում և հեռանում միշտ երեսը նրան դարձած։ Ողջի գյուղի մոտ ոչ միայն մահմեդականների կողմից, այլև հայերից հարգվում էր Փիrդoւղաճի գերեզմանը, որի վրա մոմ կամ ճրագ էին վառում ճամփորդները, մանավանդ ձմեռվա ձյուն և բուք եղանակներին Տաշտունի (Դիբագլուի) լեռնանցքով Մեղրու հովիտը տեղափոխվելիս։

Այսպիսի գերեզմանների մեջ թաղված ճգնավորների, նահատակների, սրբերի, անունները մնում են անհայտ։ Նույնպես չի պահպանվել որևէ ավանդություն նրանց վարած կյանքի մասին[102]։ Այսպիսի անանուն գերեզմաններն ուխտատեղիներ էին։ Նրանց մեջ թաղված ննջեցյալների հոգիները մեծարվում էին քարերը համբուրելով, մոմ կամ ճրագ վառելով, վorձակ, գառ կամ այլ մատաղ բերելով, աղոթքի մեջ նրանց զորության հովանավորությունն էր աղերսվում, հիվանդության ժամանակ՝ բժշկություն և այլն։ Մյուս կողմից նաև վախենում էին նրանց թշնամական միջամտությունից և դժգոհությունից։

Այսպիսի ննջեցյալների հոգիներն արդեն կորցրած էին լինում իրենց անմիջական կապը տոհմի, գերդաստանի և համայնքի հետ, և արդեն փոխադրված հասարակ ննջեցյալների հոգիների շարքից գէrբճակաճ զorութjուճ ուճեցող անմարմին էակների շարքը, ոգիների շարքը։

---

102 Այստեղ պետք է նշել, որ Զանգեզուրումն էլ, ինչպես Լեռնային Ղարաբաղում գրեթե չի նշվում հայկական սրբերի պաշտամունքը և Գրիգոր Լուսավորչի, Գայանեի, Հռիփսիմեի, Ղևոնդի, Մեսրոպի, Վարդանի և առհասարակ քրիստոնեական որևէ սրբի գերադաս պաշտամունք։ Ինչպես, օրինակ՝ Նախիջևանի Ագուլիսի շրջանում՝ ս. Ստեփանոսի, Արարատյան Այգեշատ շրջանում՝ ս. Աստվածածնի, Լոռում և Ղազախում՝ ս. Սարգսի։